ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0009, ք. Երևան, Իսահակյան 28

Ереван 0009, Исаакяна 28

28 Isahakyan Str, 0009, Yerevan, Armenia

Հեռ. +374 10 52 94 51

www.tvradio.am

nctr@tvradio.am

ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյան
Մամուլի ասուլիս
30.01.2024 թ.; ժ. 12.00

ՏԵՂԵԿԱՆՔ

Հակիրճ ներկայացված են կարգավորող մարմնի 2023 թ. իրականացված գործառույթների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ

Վարչական վարույթներ

«Տեսալսողական մեդիայի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքներով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում Հանձնաժողովը 2023 թ. հարուցել է 64 վարչական վարույթ. 57-ը՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ 7-ը՝ բողոքների համաձայն: Վարույթների հարուցման պատճառներ՝ հեղինակային իրավունքների խախտման, մեկ եթերային ժամվա ընթացքում ցուցադրվող գովազդի տևողության չպահպանման, տարեկան հասույթի մասին տեղեկատվության չներկայացման, անչափահասների մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների, ինչպես նաև սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող բովանդակության հեռարձակման, հայհոյանքը եթերում, հանրօգուտ հաղորդումների առնվազն 20% չպահպանումը և այլն:

Համեմատություն. **2013-2018** թթ. հարուցվել է 13 վարույթ, **2019-2023** թթ.՝ 232:

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դատական գործեր

2013-2018 թթ. Հանձնաժողովի հայցով՝ լիցենզիայի գործողության դադարեցման հիմքով, ունեցել ենք մեկ դատական գործ:

2019-2023 թթ. վարչական դատարաններում եղել է ընդհանուր 33 դատական գործ:

2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դատարաններում գտնվող չավարտված գործերի թիվը 19-ն է:

Էթիկայի նորմերի խախտումներ

Լիցենզավորված բոլոր հեռարձակողները պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր, որը նաև լիցենզիայի պայման է: Հեռարձակողներն ստորագրել են Հայստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մի քանի Հեռարձակողներ ընտրել են ներքին ինքնակարգավորման տարբերակը: Հանձնաժողովը դիմել է ինքնակարգավորման մարմիններ. 2021 թ.՝ 8, 2022 թ.՛ 13 և 2023 թ.՝ 3 անգամ:

Լիցենզավորման գործընթաց

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորումն իրականացվում է մրցութային ընթացակարգով:

Հանձնաժողովի կողմից 2023 թ. տրամադրվել է 5 լիցենզիա, որից մեկը հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման, 1-ը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործման, 3-ը ցանցային օպերատորի գործունեության համար:

2013-2018 թթ. տրամադրվել է 73 լիցենզիա, որից 18-ը լսողական ծրագրի հաճախականության օգտագործման և 55-ը ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ:

2019-2023 թթ. տրամադրվել է 92 լիցենզիա, որից 30-ը հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման, 11-ը լսողական ծրագրի հաճախականության օգտագործման և 51-ը ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ:

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

<u>Միջազգային համագործակցություն</u>

Հանձնաժողովն իր ձևավորման օրից համագործակցել է մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների, միջազգային կազմակերպությունների և հարթակների հետ: Հանձնաժողովը հանդիսանում է Կարգավորող մարմինների եվրապական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF), Կենտրոնական Եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF) անդամ:

2021-ից Հանձնաժողովը պաշտոնապես ընտրվել է միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի անդամ (MNRA): 2023-ին Ալբանիայում կայացած Միջերկրածովյան կարգավորող մարմինների պլատֆորմի (MNRA) համաժողովի ընթացքում Հանձնաժողովն ընտրվել է պլատֆորմի փոխնախագահող երկիր, որի ընթացքում որոշում է կայացվել 2024-ին կայանալիք համաժողովը Երևանում անցկացնելու մասին:

2021-ին Մոսկվայում Հանձնաժողովի և ՌԴ տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և զանգվածային հաղորդակցության բնագավառի վերահսկողության դաշնային ծառայության միջև կնքվել է Հուշագիր՝ տեսալսողական մեդիայի ոլորտում համագործակցության մասին:

2021-ին Երևանում Հանձնաժողովի և Ուկրաինայի հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ազգային խորհրդի (ՀՌՀԱԽ) միջև ստորագրվել է հուշագիր՝ հեռարձակման կարգավորման ոլորտում համագործակցության մասին:

2022-ից Հանձնաժողովը դարձել է Ֆրանկոֆոն երկրների մեդիա կարգավորողների ֆորումի լիիրավ անդամ (REFRAM):

2022-ին Թբիլիսում ՀՌՀ-ն և Վրաստանի ազգային հաղորդակցությունների հանձնաժողովը (ComCom) ստորագրել են համագործակցության մասին Հուշագիր:

2022-ին Վիլնյուսում ՀՌՀ և Լիտվայի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

2023-ին Արգենտինայի Հանրապետության հաղորդակցությունների պետական մարմնի միջև (ENACOM) ստորագրել է Փոխըմբռնման հուշագիր:

2023-ին Հանձնաժողովը դարձել է Հեռահաղորդակցությունների միջազգային ինստիտուտի (IIC) Փոքր ազգերի կարգավորողների ֆորումի (SNRF) լիիրավ անդամ:

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

<u>Տեխնիկական վերազինում</u>

Հանձնաժողովը գրեթե ավարտել է 2020 թվականին մեկնարկած տեխնիկական վերազինման աշխատանքները:

Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետությունն ու որակը բարձրացնելու նպատակով ձեռք է բերվել Formicaitek մշտադիտարկման համակարգը, որը հնարավորություն է տալիս Հեռուստառադիոհեռարձակման ցանցից օպտիկական մանրաթելով ստանալ հանրապետական, մայրաքաղաքային և մարզային բոլոր հեռուստաալիքների ազդանշանները ULTRA-HD ձևաչափով:

Մշտադիտարկման համակարգում ներառված է MULTI TUNER համակարգը, որը հնարավորություն է ընձեռում մշտադիտարկելու մայրաքաղաքային ծածկույթի բոլոր ռադիոընկերությունների ազդանշանները: Ձեռք է բերվել գերհզոր սերվերային համակարգ, որը հնարավորություն է տալիս իրականացնելու հանրապետական, մայրաքաղաքային և մարզային հեռուստառադիոընկերությունների էլեկտրոնային մատյանների հաշվառման աշխատանքները:

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հաղորդումներ

Հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող
հանրապետական և մայրաքաղաքային սլոթի հեռուստածրագրերի
ուղղվածությունը ըստ ժանրերի

ուղղվածություն	*%*
Հանրօգուտ	32
Ժամանցային	17
Հեռուստասերիալ	16
Այլ թեմաներ	11
Լրատվական	10
Կոմերցիա	7
Հասարակական-քաղաքական	4
Գեղարվեստական ֆիլմ	2

Հանրօգուտ ուղղվածության հաղորդումներ %-ով

ուղղվածություն	*%*
Մշակութային	16
Կրթական	8
Մանկական	4
Մարզական	4

Հայերեն լեզվով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների տեսակարար կշիռը եթերում %-ով





ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող ***մարզային***
սլոթի հեռուստածրագրերի ուղղվածությունն
ըստ ժանրերի

ուղղվածություն	*%*
Հանրօգուտ	32
Ժամանցային	20
Հեռուստասերիալ	9
Այլ թեմաներ	9
Լրատվական	5
Կոմերցիա	2
Հասարական-քաղաքական	0
Գեղարվեստական ֆիլմ	23

Հանրօգուտ ուղղվածության հաղորդումներ %-ով

ուղղվածություն	*%*
Մշակութային	13
Կրթական	9
Մանկական	9
Մարզական	1

Հայերեն լեզվով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների տեսակարար կշիռը եթերում %-ով



ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ցանցային օպերատորների փաթեթներում ցուցադրվող ծրագրերի ուղղվածությունն ըստ ժանրերի

Ժանր	*քանակ*
Ժամանցային	69
Կինո և սերիալ	55
Ընդհանուր	43
Ճանաչողական	35
Նորություններ	27
Մանկական	26
Հոբբի	24
Սպորտային	17
էրոտիկա	6
Ապրելավոճ	3
Ուսուցչողական	3
Բիզնես	2
Էթնոս	2
Ինֆորմացիոն	1

Ծրագրերն ըստ արտադրող երկրի

երկիր	*քանակ*
Ռուսաստան	150
Հայաստան	69
ԱՄՆ	42
Եվրոմիություն	24
Մեծ Բրիտանիա	20
Այլ Երկիր (տարաճաշրջան)	8

Ծրագրերն ըստ լեզուների

Լեզու	*քանակ*
ռուսերեն	220
անգլերեն	74
հայերեն	59
այլ լեզուներով	12
ֆրանսերեն	11

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Համեմատական վերլուծություն
2019 – 2023թ. վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզուն (%)